ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Հայաստանի Հանրապետության կառավարության և Ռուսաստանյան Դաշնության կառավարության միջև Ռուսաստանյան Դաշնության զինվորական կազմավորումների Հայաստանի Հանրապետությունում ռուսաստանյան ռազմակայանի տարածքից դուրս ամենօրյա գործունեության և կայազորային ծառայության կազմակերպման մասին

Հայաստանի Հանրապետության կառավարությունը և Ռուսաստանյան Դաշնության կառավարությունը, այսուհետև Կողմեր,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանյան Դաշնության միջև ՀՀ տարածքում ռուսաստանյան ռազմակայանի մասին» 1995թ. մարտի 16-ի Պայմանագրով,

նկատի ունենալով ռուսաստանյան ռազմակայանի զինվորական կազմավորումների դրա տարածքից դուրս ամենօրյա գործունեության և կայազորային ծառայության կազմակերպման անհրաժեշտությունը,

համաձայնեցին ներքոհիշյալի մասին.

Հոդված 1

Սույն Համաձայնագրում կիրառվող տերմինները նշանակում են՝

«ռուսաստանյան ռազմակայանի կայազոր» - Կողմերի միջև համաձայնեցված և որոշված սահմաններով Հայաստանի Հանրապետության տարածքի բնակավայրերում կամ դրանցից դուրս ժամանակավոր կամ մշտապես տեղակայված Ռուսաստանյան Դաշնության զինված ուժերի զորամասեր,

«կայազորային ծառայություն» - զորքերի ամենօրյա գործունեության և պատրաստության, զինվորական կարգապահության և սահմանված կարգի պահպանման, ինչպես նաև զորքերի մասնակցությամբ անցկացվող կայազորային միջոցառումների համար անհրաժեշտ պայմաններ ապահովելու նպատակով ռուսաստանյան ռազմակայանի կայազորում կազմակերպվող միջոցառումների համալիր:

Սույն Համաձայնագրում կիրառվում են նաև «Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանյան Դաշնության միջև ՀՀ տարածքում ռուսաստանյան ռազմակայանի մասին» 1995թ. մարտի 16-ի Պայմանագրի 1-ին հոդվածում զետեղված տերմինները:

Հոդված 2

Ռուսաստանյան ռազմակայանի կայազորային և պահակային ծառայություններն իրականացվում են Ռուսաստանյան Դաշնության օրենսդրությանը և սույն Համաձայնագրին համապատասխան:

Հոդված 3

Ռուսաստանյան ռազմակայանի կայազորների սահմանները համընկնում են Հայաստանի Հանրապետության օրենսդրության համապատասխան Հայկական Կողմից ձևակերպված անշարժ գույքի սեփականության /օգտագործման/ իրավունքի գրանցման մասին Վկայագրերում սահմանված Հայաստանի Հանրապետության տարածքի Ռուսաստանյան Դաշնությանը ռուսաստանյան ռազմակայանի կետերի տեղակայման համար փոխանցվող հողամասերի սահմանների հետ:

Հոդված 4

Ռուսաստանյան ռազմակայանի կայազորների պետերը կայազորային և պահակային ծառայությունների կազմակերպման, զորքերի մասնակցությամբ ռուսաստանյան ռազմակայանի տարածքից դուրս կայազորային միջոցառումների անցկացման դեպքում իրենց գործողությունները համաձայնեցնում են Հայաստանի Հանրապետության իրավասու պետական կառավարման, այդ թվում ռազմական մարմինների հետ:

Հոդված 5

Ռուսաստանյան ռազմակայանի տեղակայման կետերի սահմաններից դուրս, փողոցներում և այլ հասարակական վայրերում, երկաթուղային ու ավտոմոբիլային կայարաններում, կայարաններում և օդանավակայաններում, ինչպես նաև կայազորին հարակից բնակավայրերում գտնվող զինծառայողների կողմից կարգի պահպանման և զինվորական կարգապահության պահպանման նկատմամբ հսկողության համար նշանակվում են կայազորային պարեկներ: Պարեկության սխեման և երթուղիները համաձայնեցվում են Հայաստանի Հանրապետության ներքին գործերի տարածքային մարմինների և Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության համապատասխան կայազորի պետի հետ: Կայազորային պարեկների կազմը, սպառազինությունը, անձնակազմի համազգեստի տեսակը սահմանվում են ռուսաստանյան ռազմակայանի կայազորի պետի հրամանով: Ռուսաստանյան ռազմակայանի կայազորի տարածքից դուրս զինված պարեկության դեպքում տեղեկացվում է Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության ռազմական ոստիկանության վարչությունը: Կայազորի պարեկը պետք է ունենա Ռուսաստանյան Դաշնության զինված ուժերում սահմանված կրծքանշաններ և թևկապեր:

Հատուկ կարևորության երթուղիներում կայազորի զինվորական պարետատան հետ կապի համար պարեկն ապահովվում է դյուրակիր ռադիոկայանով:

Հոդված 6

Ռուսաստանյան ռազմակայանի կայազորային պարեկի պետը Հայաստանի Հանրապետության զինված ուժերի զինծառայողների կողմից

զինվորական կարգապահության կամ քաղաքացիական անձանց կողմից հասարակական կարգի խախտման դեպքում այդ մասին անհապաղ տեղեկացնում է Հայաստանի Հանրապետության համապատասխան տարածաշրջանի ռազմական ոստիկանության մարմիններին կամ Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության տարածքային մարմիններին, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության համապատասխան կայազորների զինվորական պարետներին:

Հոդված 7

Հայաստանի Հանրապետության զինված ուժերի կայազորային պարեկը, Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության ռազմական ոստիկանության վարչության, Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության, Հայաստանի Հանրապետության ազգային անվտանգության նախարարության աշխատակիցները ծառայության կատարման և օպերատիվ-հետախուզական միջոցառումներ անցկացնելու ժամանակ իրավունք ունեն անձը հաստատելու նպատակով ստուգել ռուսաստանյան ռազմակայանի դրա սահմաններից դուրս գտնվող, զինծառայողների փաստաթղթերը: Փաստաթղթերի բացակայության դեպքում նշված զինծառայողները կարող են ձերբակալվել մինչև նրանց անձը պարզելը: Ռուսաստանյան զինծառայողի ձերբակալումն իրականացնող Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության ռազմական ոստիկանության վարչության և Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության մարմիններն այդ մասին անհապաղ տեղեկացնում են ռուսաստանյան ռազմակայանի հրամանատարությանը:

Հասարակական կարգը խախտելու կամ հանցագործություն կատարելու դեպքում ռուսաստանյան ռազմակայանի զինծառայողը ձերբակալվում է, ինչի մասին շտապ ծանուցվում են Ռուսաստանյան Դաշնության իրավասու մարմինները:

Հոդված 8

Ռուսաստանյան ռազմակայանի կայազորներում, դրանց հարակից ճանապարհներին, կայազորների միջև տրանսպորտային միջոցների երթևեկության հիմնական երթուղիներում, զորամասերի տրանսպորտային միջոցների վարորդների /մեխանիկ-վարորդների/ կողմից ճանապարհային երթևեկության կանոնների պահպանման նկատմամբ հսկողության համար ռուսաստանյան ռազմակայանի կայազորի պետի հրամանով կազմավորվում է ռազմական ավտոմոբիլային տեսչություն:

Ռազմական ավտոմոբիլային տեսչության անշարժ կետերի տեղաբաշխման սխեման և հսկիչ շարժական կետերի տեղաշարժման երթուղիները համաձայնեցվում են Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության տարածքային մարմինների, Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության համապատասխան կայազորի պետի հետ և հաստատվում են ռուսաստանյան ռազմակայանի կայազորի պետի կողմից:

Հոդված 9

Կողմերի իրավասու մարմինների համաձայնեցմամբ կայազորային պարեկները և ռազմական ավտոմոբիլային տեսչության հսկիչ կետերի հերթապահները կարող են ծառայությունը կրել Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության աշխատակիցների, կայազորային պարեկների և Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության ռազմական ոստիկանության վարչության ռազմական ավտոմոբիլային տեսչության կետերի հերթապահների հետ համատեղ:

Հոդված10

Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության պետական ավտոմոբիլային տեսչության, Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության ռազմական ոստիկանության վարչության ռազմական ավտոմոբիլային տեսչության աշխատակիցները ճանապարհային երթևեկության կարգմակերպման ժամանակ վերահսկում են ռուսաստանյան ռազմակայանի տրանսպորտային միջոցների վարորդների /մեխանիկ-վարորդների/ կողմից ճանապարհային երթևեկության կանոնների և ճանապարհային երթևեկության անվտանգությանը վերաբերող Հայաստանի Հանրապետության այլ նորմատիվ ակտերի պահպանումը և իրավունք ունեն պատկանելությունը հաստատելու ու վարորդների /մեխանիկ-վարորդների/ մոտ անհրաժեշտ ճանապարհային փաստաթղթերի առկայությունն ստուգելու համար կանգնեցնել ռուսաստանյան ռազմակայանի տրանսպորտային միջոցները:

Ռուսաստանյան ռազմակայանի տրանսպորտային միջոցների վարորդների /մեխանիկ-վարորդների/ կողմից Հայաստանի Հանրապետությունում գործող ճանապարհային երթևեկության կանոնների խախտման դեպքում Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության պետական ավտոմոբիլային տեսչության, Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության ռազմական ոստիկանության վարչության ռազմական ավտոմոբիլային տեսչության աշխատակիցները կասեցնում են խախտումը և անհրաժեշտ դեպքերում կազմում են արձանագրություն ռուսաստանյան ռազմակայանի կառավարման մարմիններ ուղարկելու համար:

Ռուսաստանյան ռազմակայանի տրանսպորտային միջոցի վարորդի /մեխանիկ-վարորդի/ մասնակցությամբ ճանապարհա-տրանսպորտային պատահարի դեպքում Հայաստանի Հանրապետության իրավասու մարմինները կատարվածի մասին անհապաղ տեղեկացնում են ռուսաստանյան ռազմակայանի հրամանատարությանը և Ռուսաստանյան Դաշնության իրավասու մարմիններին : Դեպքի վայրի զննությունը և այլ անհետաձգելի գործողությունները կատարվում են Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանյան Դաշնության միջև Հայաստանի Հանրապետության տարածքում ռուսաստանյան ռազմակայանի գտնվելու հետ կապված իրավասության և փոխադարձ իրավական օգնության հարցերի վերաբերյալ 1997թ. օգոստոսի 29-ի Համաձայնագրի դրույթների համապատասխան:

Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության պետական ավտոմոբիլային տեսչության, Հայաստանի Հանրապետության

պաշտպանության նախարարության ռազմական ոստիկանության վարչության ռազմական ավտոմոբիլային տեսչության աշխատակիցներն իրավունք ունեն մինչ ռուսաստանյան ռազմակայանի հրամանատարության ներկայացուցիչների ժամանումը կանգառներում և կայանատեղերում կալանել ռուսաստանյան ռազմակայանի տրանսպորտային միջոցները, եթե վարորդը /մեխանիկ-վարորդը/ չունի համապատասխան կարգի տրանսպորտային միջոցը վարելու վարորդական վկայական և ճանապարհային փաստաթղթեր, ինչպես նաև եթե նա կամ մեքենայի ավազը գտնվում է ալկոհոլային, թմրադեղային կամ տոքսիկային հարբածության վիճակում: Տրանսպորտային միջոցների կալանման բոլոր դեպքերի մասին անհապաղ հաղորդվում է ռուսաստանյան ռազմակայանի կառավարման մարմիններին:

Ռուսաստանյան ռազմակայանի տրանսպորտային միջոցի զննումը և ստուգումը կատարվում է միայն ռուսաստանյան ռազմակայանի ռազմական ավտոմոբիլային տեսչության ներկայացուցիչների մասնակցությամբ:

Ֆելդեգերի վկայականի ներկայացման դեպքում արգելվում է ֆելդեգերա-փոստային կապի ավտոմեքենաների, ինչպես նաև հատուկ նշանակության ռազմական բեռներ տեղափոխող տրանսպորտային միջոցների զննումը և ստուգումը:

Ճանապարհային երթևեկության կանոնների խախտման դեպքում անհրաժեշտ փաստաթղթեր կազմելու համար այդ տրանսպորտային միջոցների կալանումը պետք է լինի կարճաժամկետ:

Հոդված11

Անձնական օգտագործման ավտոմեքենաներ ունեցող ռուսաստանյան ռազմակայանի զինծառայողների և նրանց ընտանիքների անդամների նկատմամբ գործում են ճանապարհային երթևեկության կազմակերպման և անձնական ավտոմոբիլային տրանսպորտի շահագործման վերաբերյալ Հայաստանի Հանրապետությունում ընդունված նորմատիվ ակտերը: Նշված տրանսպորտային միջոցները ենթակա են գրանցման և տեխնիկական զննում են անցնում Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության պետական ավտոմոբիլային տեսչության համապատասխան մարմնում:

Ռուսաստանյան ռազմակայանի զինծառայողներին և նրանց ընտանիքների անդամներին վարորդական իրավունքի վկայականներ են տալիս /փոխանակում/ Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության պետական ավտոմոբիլային տեսչության համապատասխան մարմինները Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանած կարգով:

Հոդված12

Ռուսաստանյան ռազմակայանի տարածքից դուրս ավտոշարասյուների և թրթռային տեխնիկայի երթևեկության կազմակերպման համար ռուսաստանյան ռազմակայանի կառավարման մարմինների կողմից մշակվում են երթուղիների սխեմաներ, որոնք ենթակա են համաձայնեցման Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության և Հայաստանի Հանրապետության այն տարածաշրջանների տարածքային իշխանության մարմինների հետ, որոնց տարածքով անցնում են երթուղիները:

Այդ նպատակով ռուսաստանյան ռազմակայանի կառավարման մարմինները երթևեկության սկսվելուց ոչ պակաս, քան երեք օր առաջ տեղեկացնում են Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության պետական ավտոմոբիլային տեսչության և Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության ռազմական ոստիկանության վարչության ռազմական ավտոմոբիլային տեսչության ստորաբաժանումներին ռուսաստանյան ռազմակայանի տարածքից դուրս 10-ից ավելի քանակով ռազմական ավտոմեքենաների շարասյան, ինչպես նաև անկախ քանակից թրթռուռավոր տեխնիկայի և վտանգավոր բեռներ տեղափոխող տրանսպորտային միջոցների տեղաշարժման մասին: Ռուսաստանյան ռազմակայանի կառավարման մարմինների հայտերով Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության պետական ավտոմոբիլային տեսչության, Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության ռազմական ոստիկանության վարչության ռազմական ավտոմոբիլային տեսչության տարածքային ստորաբաժանումները Կողմերի իրավասու մարմինների հետ համաձայնեցմամբ ուժեր և միջոցներ են հատկացնում ավտոմոբիլային շարասյուների և ռազմական տեխնիկայի երթևեկության կարգավորման ու ուղեկցման կազմակերպման համար:

Հոդված13

Ռուսաստանյան ռազմակայանի զինծառայողների կողմից զորամասն ինքնագլուխ թողնելու դեպքում Ռուսաստանյան Դաշնության իրավասու մարմինները և զորամասի հրամանատարությունը Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության տարածքային մարմինների, Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության ռազմական ոստիկանության վարչության և Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության համապատասխան կայազորի պետի հետ համաձայնեցմամբ անցկացնում են օպերատիվ-հետախուզական միջոցառումներ:

Հանցագործություն կատարած և քննչական մարմիններից թաքնված ռուսաստանյան ռազմակայանի զինծառայողների, ինչպես նաև զենքով զորամասն ինքնագլուխ թողած զինծառայողների հետախուզման անցկացման ժամանակ, ռուսաստանյան ռազմակայանի կառավարման մարմինները Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության ռազմական ոստիկանության վարչության մարմիններին տեղեկություններ են փոխանցում, որոնցում նշում են զինծառայողների կենսագրական տվյալները, արտաքին նշանները, հանցագործության կատարման ժամանակը, տեղը և հանգամանքները, ինչպես նաև համաձայնեցված լայնամասշտաբ օպերատիվ-հետախուզական միջոցառումների անցկացման համար անհրաժեշտ այլ տվյալներ և նյութեր:

Համատեղ օպերատիվ-հետախուզական և քննչական գործողությունների անցկացման ժամանակ Կողմերի իրավասու մարմինները ղեկավարվում են Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանյան Դաշնության միջև Հայաստանի Հանրապետության տարածքում ռուսաստանյան ռազմակայանի գտնվելու հետ կապված իրավասության և փոխադարձ իրավական օգնության հարցերի վերաբերյալ 1997թ. օգոստոսի 29-ի Համաձայնագրի դրույթներով:

Հոդված 14

Ռուսաստանյան ռազմակայանի համար նախատեսված ավտոմոբիլային, երկաթուղային և օդային տրանսպորտով բերվող /ուղարկվող/ ռազմական տեխնիկայի և սպառազինության, ռազմական բեռների պահպանվածությունն ապահովելու նպատակով ռուսաստանյան ռազմակայանի տեղակայման կետերից դուրս գտնվող բեռնման/բեռնաթափման/ վայրերում, ինչպես նաև վարժադաշտերում և զորավարժությունների շրջաններում Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության տարածքային մարմինների, Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության ռազմական ոստիկանության վարչության տարածաշրջանային մարմինների և Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության համապատասխան կայազորի պետի հետ համաձայնեցմամբ Հայաստանի Հանրապետության տարածքում ռուսաստանյան ռազմակայանի զինվորական կազմավորումներից ռուսաստանյան ռազմակայանի կայազորների պետերի կողմից կարող են նշանակվել ժամանակավոր պահակախմբեր:

Հոդված 15

Ռուսաստանյան ռազմակայանի զինվորական կազմավորումների մարտական պատրաստությունն իրականացվում է ռուսաստանյան ռազմակայանին հատկացված տարածքներում: Հատկացված տարածքների սահմաններից դուրս նշված մարտական պատրաստությունն իրականացվում է ըստ պլանների, որոնք ամեն տարի Հայաստանի Հանրապետության տարածքում ռուսաստանյան ռազմակայանի հրամանատարության կողմից համաձայնեցվում են Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության հետ, ընդ որում համաձայնեցման են ենթակա նաև զորավարժությունների շրջանները, պլանավորվող միջոցառումները և դրանց անցկացման ժամկետները:

Նշված միջոցառումների նախապատրաստման ընթացքում, սակայն դրանց սկսվելուց ոչ ուշ, քան 10 օր առաջ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության հետ համաձայնեցվում են ռազմական կազմավորումների շարժման երթուղիները, ինչպես նաև ներգրավվող ուժերի և միջոցների կազմը:

Հոդված 16

Սույն Համաձայնագրի դրույթների կիրառման և մեկնաբանման հետ կապված վիճելի հարցերը լուծվում են «Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանյան Դաշնության միջև Հայաստանի Հանրապետության տարածքում ռուսաստանյան ռազմակայանի մասին» 1995թ. մարտի 16-ի Պայմանագրի 21-րդ հոդվածի համապատասխան:

Հոդված 17

Սույն Համաձայնագրի մեջ փոփոխությունները և լրացումները մտցվում են Կողմերի փոխադարձ համաձայնությամբ և ձևակերպվում արձանագրությամբ, որը հանդիսանում է սույն Համաձայնագրի անբաժանելի

մասը: Արձանագրությունն ուժի մեջ է մտնում սույն Համաձայնագրի 18-րդ հոդվածով նախատեսված կարգին համապատասխան:

Հոդված 18

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում դրա ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ Կողմերի ներպետական ընթացակարգերի կատարման մասին վերջին գրավոր ծանուցման օրվանից և գործում է Հայաստանի Հանրապետության տարածքում ռուսաստանյան ռազմակայանի մասին Հայաստանի Հանրապետության և Ռուսաստանյան Դաշնության միջև 1995թ. մարտի 16-ի Պայմանագրի գործողության ժամկետի ընթացքում:

Կատարված է ք. Մոսկվայում, 2000 թվականի դեկտեմբերի "21" -ին երկու բնագրից՝ յուրաքանչյուրը հայերեն և ռուսերեն լեզուներով, ընդ որում երկու տեքստերը հավասարազոր են:

Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից	Ռուսաստանյան Դաշնության կառավարության կողմից